ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2020թ. N 151-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 69-րդ հոդվածին համապատասխան՝ հիմք ընդունելով աճուրդը չկայացած համարելու մասին 2020 թվականի մարտի 12-ի N 14 արձանագրությունը և հաշվի առնելով այն, որ 2020 թվականի մարտի 2-ին Ջերմուկի համայնքապետարանի հողամասերի օտարման և վարձակալման տրամադրման հանձնաժողովի կողմից հայտարարված աճուրդի ժամանակ (լոտ 2) հաղթած անձը՝ Ղևոնդ Ղևոնդյանը, 10 օրվա ընթացքում ամբողջությամբ չի վճարել հողամասի գինը՝ աճուրդը համարել չկայացած և չեղյալ ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2020 թվականի մարտի 2-ի «Հասարակական կառուցապատման նպատակով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Գետափնյա փողոց N 3 հասցեում գտնվող հողամասի օտարման աճուրդի արդյունքները հաստատելու մասին» N 100-Ա որոշումը:

2. Հաշվի առնելով, որ 2020 թվականի հունվարի 17-ին կայացած Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 2/4/1 հասցեում գտնվող ջրային նշանակության հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման մրցույթում հաղթող ճանաչված «Ջերկաֆ» ՍՊԸ–ն հիշյալ հողամասը իրավունքով ծանրաբեռնված լինելու պատճառով չի կարող գրանցել իր՝ վարձակալության պայմանագրից ծագող իրավունքը՝ հիշատակված մրցույթը համարել չեղյալ և ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 17-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 2/4/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» N 5-Ա որոշումը:

3. Հաշվի առնելով ս/թ մարտի 17-ից Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսի համաճարակի պատճառով հայտարարված արտակարգ դրության հետևանքով 2020 թվականի մարտի 2-ին կայացած Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5/3 հասցեում գտնվող հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման մրցույթի հաղթող «Ջերսան» ՍՊԸ–ի կողմից իր՝ վարձակալության պայմանագրից ծագող իրավունքը գրանցել

չկարողանալու հանգամանքը և ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ հիշատակված մրցույթը համարել չկայացած և ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի ս/թ մարտի 2-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5/3 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» N 106-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 8
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2020թ. N 152-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 1,13071 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին գույքային միավոր:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2020թ. N 153-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «ա» ենթակետի և 48-րդ կետի հիման վրա **որոշում եմ՝**

1.Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 16-րդ փողոցի վրա գտնվող 1985,2 քմ մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն.

Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, 16-րդ փողոց N 7:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 մայիսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2020թ. N 154-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 1,9 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին գույքային միավոր:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 մայիսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2020թ. N 155-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 1,903 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին գույքային միավոր:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 մայիսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2020թ. N 156-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 0,17711 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն.

Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, 16-րդ փողոց, 3-րդ փակուղի N 2

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2020թ. N 157-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 0,11143 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ վարելահող, ճանաչել որպես առանձին գույքային միավոր:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2020թ. N 158-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 3 ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾԱՌԵՐԻ ԷՏՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 15-րդ և 22-րդ ենթակետերով, հիմք ընդունելով ՀՀ Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկի բաժնի պետի ս/թ մայիսի 11-ի դիմումը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 3 վարչական շենքին (զբաղեցված ՀՀ Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկի բաժնի կողմից) հարակից կանաչապատ տարածքները բարեկարգելու և սանիտարական մաքրման նպատակով թույլատրել իրականացնելու վայրի աճած թվով հինգ ծառերի էտ և համապատասխան մասնագետի կողմից՝ մրգատու պատվաստում:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը, համաձայնությամբ, վերապահել ՀՀ Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկի բաժնի՝ Ծառայության գծով պետի տեղակալ Ա. Գ. Հարությունյանին և համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Տ. Գառնիկյանին: :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մայիսի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2020թ. N 159-Ա

«ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 6-Ն որոշման, հաշվի առնելով «Վայլդբերրիզ» ՍՊ ընկերության տնօրենի ներկայացուցիչ Կորյուն Սարգսյանի դիմում-հայտը (մտից՝ 515, 2020 թվականի մայիսի 6) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել «Վայլդբերրիզ» ՍՊ ընկերությանը տեղադրելու արտաքին գովազդ (թույլտվություն N 7):

2. «Վայլդբերրիզ» ՍՊ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1 125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վայլդբերրիզ» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

14 մայիսի 2020թ.
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2020թ. N 160-Ա

ԿԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչ Կարինե Գևորգի Գևորգյանի դիմումը (մտից N 535, 12.05.2020 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել փոփոխելու Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարինե Գևորգի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2010 թվականի մայիսի 7-ի N 2578054 և N 2578053 վկայականներ) Գնդեվազ գյուղում գտնվող 0,61 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-016-230-077) և 1,309 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-016-230-078) մակերեսներով գյուղատնտեսական նշանակության հողամասերի հողատեսքերը՝ վարելահողից բազմամյա տնկարկների (պտղատու այգի):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Գևորգի Գևորգյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 մայիսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2020թ. N 161-Ա

ԿԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչ Կարինե Գևորգի Գևորգյանի դիմումը (մտից N 535, 12.05.2020 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել փոփոխելու Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարինե Գևորգի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2010 թվականի մայիսի 7-ի N 2578055 և N 2578056 վկայականներ) Գնդեվազ գյուղում գտնվող 4,5 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-016-232-016) և 5,5 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-016-230-079) մակերես ներով գյուղատնտեսական նշանակության հողամասերի հողատեսքերը՝ արոտից բազմամյա տնկարկների (պտղատու այգի):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Գևորգի Գևորգյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 մայիսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020թ. N 162-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 138-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2017 թվականի մայիսի 11-ի «Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի արտակարգ իրավիճակների հանձնաժողով ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին» N 138-Ա որոշման հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. աղյուսակի 4-րդ տողում «Խաչատրյան Աշոտ» բառերը փոխարինել «Արմենակյան Արմեն» բառերով,

բ. աղյուսակի 13-րդ տողում՝ «Սեդրակյան Նորիկ» բառերը փոխարինել «Սեդրակյան Արթուր» բառերով,

գ. աղյուսակի 14-րդ տողում «Ավետիսյան Սյուզաննա» բառերը փոխարինել «Թադևոսյան Գոռ» բառերով,

դ. աղյուսակի 14-րդ տողում ««Ջերմուկի երիտասարդական կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն» բառերը փոխարինել ««Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19 մայիսի 2020թ.
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020թ. N 163-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N 74-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 2-ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով՝ **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2018 թվականի մայիսի 15-ի «Ջերմուկ համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբ և կազմավորումներ ստեղծելու մասին» N 74-Ա որոշման Հավելված 2-ում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. աղյուսակ 1-ից հանել 8-րդ տողը,

բ. աղյուսակ 1-ի 5-րդ տողում «Վարդանյան Տարոն» բառերը փոխարինել «Պապոյան Սմբատ» բառերով, «044090800» թվերը փոխարինել «094994224» թվերով,

գ. աղյուսակ 4-ի 2-րդ տողում «Թադևոսյան Գագիկ» բառերը փոխարինել «Ավետիսյան Անդրանիկ» բառերով, «094050449» թվերը փոխարինել «093307300» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19 մայիսի 2020թ.
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020թ. N 164-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 199-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի և 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2017 թվականի հունիսի 14-ի «Ջերմուկ համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու մասին» N 43-Ա որոշումը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի «ե» ենթակետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.04.2003թ. «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն որոշումը

1. Ստեղծել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայություններ՝ հիմնված հետևյալ բազաների վրա և նշանակել պետեր.

· Ջերմուկ համայնքի քաղաքացիական պաշտպանության ինժեներական և կոմունալ տեխնիկական ծառայություն՝ հիմնված Ջերմուկի համայնքապետարանի բազայի վրա և պետ նշանակել «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն Պավլիկ Հարությունյանին:

· Ջերմուկ համայնքի քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն՝ հիմնված Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի բազայի վրա, պետ նշանակել «Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի տնօրեն Արմեն Թադևոսյանին:

· Ջերմուկ համայնքի քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն՝ հիմնված Ջերմուկ համայնքի բնակիչների բազայի վրա, պետ նշանակել Կեչուտ գյուղի անասնաբույժ Մանուկ Մանուկյանին:

· Ջերմուկ համայնքի քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայություն՝ հիմնված Ջերմուկի համայնքապետարանի բազայի վրա, պետ նշանակել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ Նառա Միրզոյանին:

· Ջերմուկ համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայություն՝ «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի բազայի վրա, պետ նշանակել «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Մանուշակ Նալբանդյանին:

· Ջերմուկի համայնքի քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանման ծառայություն՝ հիմնված ՀՀ ոստիկանության Ջերմուկի բաժնի բազայի վրա, պետ նշանակել ոստիկանության Ջերմուկի բաժնի պետ, ոստիկանության մայոր Արմեն Արմենակյանին:

· Ջերմուկի համայնքի քաղաքացիական նպաշտպանության էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն՝ հիմնված «ՀԱՅԷԼՑԱՆՑ» ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղ «Վայք» էլեկտրացանցի բազայի հիման վրա, պետ նշանակել «Վայք» էլեկտրացանցի իրացման բաժնի պետ Գևորգ Հովհաննիսյանին:

· Ջերմուկի համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի և ազդարարման ծառայություն՝ հիմնված «ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ» ՓԲԸ Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ ցանցերի շահագործման ուղղության ցանցի բազայի վրա, պետ նշանակել Գագիկ Խաչատրյանին:

2. Հաստատել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները ըստ հավելված 1-ից-8-ի:

3. Հանձնարարել ծառայությունների պետերին 6-ամսյա ժամկետում մշակել ծառայությունների քաղաքացիական պաշտպանության պլանները՝ համաձայն ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 22-ի «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը հաստատելու մասին» թիվ 633 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2010թ.-ի օգոստոսի 26-ի թիվ 1187-Ն որոշման:»

2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի «Ջերմուկ քաղաքի զորահավաքային մարմին ստեղծելու մասին» N 199-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19 մայիսի 2020թ.
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2020թ. N 165-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 17-ի «ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի Արտավան, Բարձրունի, Գոմք և Կապույտ բնակավայրերից տարահանված և Ջերմուկ համայնքում տեղաբաշխված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանը հաստատելու մասին» N 30-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում կատարել լրացում՝ «Գոմք» բառից հետո ավելացնել «Խնձորուտ, Սերս» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19 մայիսի 2020թ.
ք. Ջերմուկ